DEVELOPERS ASSOCIATION
ARMENIA

«ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
Էլ.փոստ՝ gurgengrigoryan@developers.am info@developers.am
Հեռախոս՝ +374 (98) 513233 +374 (44) 001099
ՀՎՀՀ՝ 00261153, պետական գրանցման համարը՝ 211.171.05492 / 2010-10-14
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ծիծեռնակաբերդի խճղ., շենք՝ 8/3

19.12.2025 թ.
ԵԼ-19122025

ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

Թեման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդին անդամակցելու հայտ.

Հարգելի՛ պարոն Թովմասյան,

ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N 4 հավելվածի պահանջների համապատասխան՝ խնդրում եմ «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ-ին ընդգրկել ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում՝ ի դեմս կազմակերպության նախագահ Գուրգեն Գրիգորյանի (էլ. փոստ՝ gurgengrigoryan@developers.am , հեռ.՝ +374 [redacted], հաշվառման հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, [redacted]:

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ ամբողջ տարածքում: Գործունեության հիմնական ոլորտը քաղաքաշինությունն է, համատեղ աշխատում ենք պետական և մասնավոր կառույցների հետ՝ երկրի ներդրումային միջավայրերի բարելավման ուղղությամբ: Ակտիվորեն մասնակցում ենք նաև օրենսդրական նախաձեռնություններին, այդ թվում՝ քաղաքաշինության ոլորտի, սնանկության ոլորտի, կառուցապատման գործունեության մասին օրենքի, հարկային օրենսգրքի փոփոխությունների մշակմանը՝ նպատակ ունենալով բարձրացնել հանրային և մասնավոր հատվածի մասնակցությունը կառավարման գործընթացներին:

ՀՀ կադաստրի կոմիտեի գործընկերների հետ ունեցել ենք աշխատանքային քննարկումներ, այդ թվում՝ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի բարելավումների վերաբերյալ:

Կազմակերպության գործունեության, կատարվող աշխատանքների մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ www.developers.am կայքում:

Սույն հայտին կից ներկայացնում եմ կազմակերպության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, Գ. Գրիգորյանի նույնականացման քարտի պատճենները:

Կանխավ շնորհակալ եմ և լիահույս՝ արդյունավետ համագործակցության շարունակականության մեջ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ՝
ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ՝ ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ARMENIAN ASSOCIATION OF DEVELOPERS
«ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
00261153